02/20/06 - «Դիզայն» մասնագիտության դիմորդների համար
«ԿՈՄՊՈԶԻՑԻԱ» քննական առարկայի առաջադրանքի

ՈՒ Ղ Ե Ց ՈՒ Յ Ց

Քննական առաջադրանք - ընտրված երկրաչափական մարմինների համակցմամբ ստեղծել ծավալային եռաչափ կոմպոզիցիա՝ կատարելով այն երկու կետով կառուցվող հեռանկարի կամ աքսոնոմետրիայի կառուցման սկզբունքով՝ լուսաստվերային մշակմամբ:

Առաջադրանքի կատարման համար վիճակահանության սկզբունքով թվով 10 (տասը) երկրաչափական մարմիններից (խորանարդ, գլան, գունդ, կոն, քառանկյուն բուրգ, վեցանկյուն պրիզմա, ուղղանկյուն պրիզմա, սալիկ՝ քառանկյուն, սալիկ՝ վեցանկյուն, տափօղակ), ընտրվում են 5 (հինգ) երկրաչափական մարմիններ, որոնցից յուրաքանչյուրը 2 և ավելի անգամ պարտադիր է պետք է կիրառել քննական առաջադրանքում. միաժամանակ արգելվում է այլ մարմինների պատկերումը:

Կատարման - նյութ աշխատանքը կատարվում է A3 ձևաչափի գծագրական թղթի (վատման) վրա՝ գրաֆիտե սև մատիտով:
Թույլատրվում է գծագրական գործիքների կիրառումը:

Նպատակ - ներկայացված կոմպոզիցիայի դիտարկմամբ ստուգվում և գնահատվում են դիմորդի ստեղծագործական կարողությունները և կատարողական հմտությունները՝ քննական պահանջների պահպանմամբ:

Քննական պահանջներ -

- Առաջադրանքը կատարել A3 ձևաչափի գծագրական թղթի վրա (վատման), հորիզոնական կամ ուղղահայաց դասավորությամբ՝ կարևորելով ընդհանուր կոմպոզիցիայի տեղադրման և համաչափական սկզբունքները:
- Կոմպոզիցիայի ամբողջական կառուցում՝ բացառելով խորը հեռանկարի բազմապլանային կատարման սկզբունքը:
- Ապահովել ինչպես ընդհանուր կոմպոզիցիայի, այնպես էլ կոմպոզիցիայում կիրառված առանձին երկրաչափական մարմինների՝ երկու կետով հեռանկարի կամ աքսոնոմետրիայի կառուցումը:
- Կատարել առաջադրանքի լուսաստվերային մշակում գծանկարի շտրիխային տեխնիկայով:
- Ծավալային կոմպոզիցիայի դիտման կետը և պայմանական լույսի աղբյուրը ընտրել ըստ հայեցողության:
- Աշխատանքում կիրառել համակցման (մեկ մարմինը մյուսով հատելու), մասնատման և հանման սկզբունքները:
- Վիճակահանության սկզբունքով ընտրված թվով 5 (հինգ) երկրաչափական մարմիններից յուրաքանչյուրը 2 և ավելի անգամ պարտադիր կիրառել կոմպոզիցիոն առաջարկում:

Աշխատանքի կատարման համար տրվում է 4 ժամ (240 րոպե)՝ առանց ընդմիջման:

Աշխատանքի գնահատման համար կարևորվում է ներկայացված պահանջների ապահովումը:

Նախապես ծածկագրված քննական աշխատանքը ստուգվում և գնահատվում է քննական հանձնաժողովի բոլոր անդամների կողմից անհատապես՝ համաձայն գնահատման կից ներկայացված չափանիշների: Ստացված հանրագումարային միավորը միջինացվում է 20.00 (քսան) միավորի սահմանում: Դրական են համարվում 7.5 (յոթ ու կես) և բարձր միավորները (համաձայն ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի № 597-Ն որոշման), գնահատման միավորները նշանակվում են հարյուրերորդական մասի պահպանմամբ:

Քննական առաջադրանքի գնահատման չափանիշներ.

№	Հիմնական չափանիշներ	№	Պարամետրեր	Միավորներ	
1.	Կոմպոզիցիոն լուծում	1	A3 ձևաչափում կոմպոզիցիայի գրագետ տեղադրում	5	20
		2	Կոմպոզիցիոն մտահղացման ինքնատիպ և կերպարային լուծում		
		3	Երկրաչափական մարմինների համակցման սկզբունքի (մեկ մարմինը մյուսով հատելու) կիրառում		
		4.	Երկրաչափական մարմինների մասնատման սկզբունքի կիրառում		
		5.	Երկրաչափական մարմինների հանման սկզբունքի կիրառում		
2.	Կառուցում	1.	Համակցվող՝ (մեկ մարմինը մյուսով հատվող) երկրաչափական մարմինների գրագետ կառուցում	5	
		2.	Մասնատված երկրաչափական մարմինների գրագետ կառուցում		
		3.	Երկրաչափական մարմիններից ռելիեֆային ձևափոխում և գրագետ կառուցում՝ հանման եղանակով		
		4.	Երկու կետով կառուցվող հեռանկարի կամ աքսոնոմետրիայի պահանջների պահպանում		
		5.	Երկրաչափական մարմինների կառուցման գծային թույլ արտահայտում		
3.	Կատարողական հմտություններ և կարողություններ	1.	Լուսաստվերային մշակում	5	
		2.	Տոնային մշակում		
		3.	Գծանկարի շտրիխային տեխնիկայի տիրապետում		
		4.	Կոմպոզիցիայի դիտման կետի ընտրություն		
		5.	Համաչափությունների պահպանում		
4.	Աշխատանքի ամփոփում	1.	Աշխատանքի ավարտվածություն	5	
		2.	Աշխատանքի մատուցում		
		3.	Աշխատանքի արտահայտչականություն		
		4.	Կոմպոզիցիոն մտահղացման բարդություն		
		5.	Կոմպոզիցիոն մտահղացման լիարժեք բացահայտում		